Բասեն

Վարչական ղեկավար՝ Ռոման Համայակյան

Հեռ 098000434

Մակերես՝ 36.8կմ^2

Բնակչություն՝ 1658

basen.shirak@mta.gov.am

Համայնքի ներկայիս անվանումը – Բասեն
Համայնքի պատմական անվանումները- Քեփանակ, Մեծ Քեփենեկ, Մեծ Քյափանակ, Մուսայելյան:
Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը – Ներկայիս բնակչության նախնիների կողմից՝ 1813-1817 թթ-ներին:
Որ համայնքներին է սահմանակից համայնքը –
Կառնուտ, Հովիտ, Ջրառատ, Մեղրաշեն, Փանիկ, Արևիկ, Լոռու մարզ:
Համայնքի մակերեսը - Վարչական տարածք՝ 4587.46 հա, բնակելի տարածություն՝ 91.47 հա:
Հեռավորությունը մայրաքաղաքից-130 կմ:
Հեռավորությունը մարզկենտրոնից -15 կմ:
Բնակչության թիվը –1779
Բնակչության կազմը –արական՝ 901, իգական՝ 878
Համայնքի նշանավոր մարդիկ -
բժիշկ, պրոֆեսոր՝ Աշոտ Աբրահամյան, ՀԽՍՀ ԳԽ գործերի կառավարիչ՝ Գևորգ Սահակյան, քանդակագործ, նկարիչ՝ Ռաշիդ Առաքելյան:
Կրթական հաստատություններ – դպրոց, մանկապարտեզ:
Մշակութային հաստատություններ - մշակույթի տուն (չի գործում):
Մարզական հաստատություններ - մարզադահլիճ:
Արտադրական ձեռնարկություններ - չունենք:
Բնակչության հիմնական զբաղմունքը – գյուղատնտեսություն, անասնապահություն:
Հոգևոր կառույցներ - կիսակառույց եկեղեցի:
Համայնքի մասին գրքի առկայություն - առկա է:
ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ Նախկինում անվանվել է Քափակ, նաև
Քեփանակ, Քափանակ, Մեծ Քեփենեկ, ՄեծՔափանակ, Մեծ Քյափանակ, 1935թ. անվանվել է Մուսայելյան, 2006թ. վերանվանվել է Բասեն: Գյուղը գտնվում էՓամբակի լեռնաշղթայի արևմտյան փեշերին, արևելքից և հարավ-արևելքից շրջապատված լեռներով,Ախուրյանից 9 կմ, Գյումրի քաղաքից 15 կմ դեպի հարավ-արևելք, Երևանից 130 կմ հեռավորության վրա: Բասեն(Մուսայելյան) գյուղի հողային տարածությունը կազմում է 4587,46 հա, որոնք օգտագործվում են որպեսգյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3935,45 հա